ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.09.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 33/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի 26.08.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-33/15 բողոք) և կից փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած 01.09.2015թ. թիվ 09/2168 գրությունը և կից փաստաթղթերը, «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-33/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 11.09.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.08.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժովի կողմից 04.08.2015թ. մինչև 08.08.2015թ. սահմանվել է անգործության ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից անգործության ժամկետի ավարտման օր էր սահմանվել 08.08.2015թ., սակայն 08.08.2015թ. հանդիսացել է ոչ աշխատանքային օր, հետևաբար անգործության ժամկետը պետք է ավարտվեր և բողոք ներկայցվելու իրավունք վերապահվեր ներառյալ 10.08.2015թ.:

Ընկերությունը նշել է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Ընկերության նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի՝

- 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):
- 3-րդ կետի համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ:

Նույն օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն, վերլուծելով իրավական և փաստական հանգամանքները, գտնում է, որ 10.08.2015թ. «Լիկվոր» ՓԲԸ-ի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքված «ՇՀԱՊՁԲ-15/4-4-1 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման պայմանագիրը առոչինչ է և ենթակա չէ կատարման, քանի որ կնքվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված անգործության ժամկետում:

Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում նույն հոդվածի պահանջներին, ապա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ: Նույն նորմի ժամկետը օրենսդիրը սահմանել է, որպեսզի հնարավորություն ընձեռնի բողոք բերած անձին թերությունները վերացնելուց հետո կրկին բողոք ներկայացնել, որը կհամարվի ժամկետի մեջ բերված, այլ ոչ թե ժամկետ շահելու հնարավորություն ընձեռել պատվիրատուին պայմանագիրը հապճեպ կնքելու համար:

Բացի այդ, «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Սույն իրավանորմից ակնհայտ է, որ բողոքարկելու իրավունքը չի սահմանափակվում պայմանագրի կնքմամբ, ուստի «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն խնդրել է նույն բողոքը քննել նաև ներքոշարադրյալ հիմնավորմամբ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ չափաբաժինների մասով:

Հ/Բ	Ապրանքի անվանումը	«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ	«Լիկվոր» ՓԲԸ
3	Դեքստրոզ 5%-250մլ	3500000	4680000

		երեք միլիոն հինգ հարյուր հազար	չորս միլիոն վեց հարյուր ութսուն հազար
4	Դեքստրոզ 5%-500մլ	890000	1200000
		ութ հարյուր իննսուն հազար	մեկ միլիոն երկու հարյուր հազար
5	Կալիումի քլորիդ 4%-200մլ	775000	1200000
		յոթ հարյուր յոթանասունհինգ հազար	մեկ միլիոն երկու հարյուր հազար
6	Նատրիումի քլորիդ 0,9%-200մլ	8750000	10500000
		ութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար	տաս միլիոն հինգ հարյուր հազար
7	Նատրիումի քլորիդ 0,9%-500մլ	8544000	10368000
		ութ միլիոն հինգ հարյուր քառասունչորս հազար	տաս միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար
8	Նատրիումի քլորիդ 0,9%-1000մլ	690000	1260000
		վեց հարյուր իննսուն հազար	մեկ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար
10	Նատրիումի քլորիդ,կալիումի քլորիդ,կալցիումի քլորիդ 250մլ/Ռինգեր/	1575000	1890000
		մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար	մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար
11	Նատրիումի քլորիդ,կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 500մլ/Ռինգեր/	1602000	1944000
		մեկ միլիոն վեց հարյուր երկու հազար	մեկ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար
13	Ամինոկապրոնաթթու 5% -100մլ	320000	540000
		երեք հարյուր քսան	հինգ հարյուր

		հազար	քառասուն հազար
14	Մանիտոլ 10%-400մլ/Մանի-Տեք/ համարժեք	870000	1080000
		ութ հարյուր յոթանասուն հազար	մեկ միլիոն ութսուն հազար
16	Հիդրոքսիէթիլ օսլա, նատրիումի քլորիդ 6%-500մլ/Պլազմո-Տեք/	1560000	3720000
		մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար	երեք միլիոն յոթ հարյուր քսան հազար

24.07.2015թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ստացված էլեկտրոնային նամակով «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն տեղեկացվել է, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել: Միաժամանակ նշվել է, որ մինչև 29.07.2015թ. ներառյալ ներկայացնել հրավերով սահմանված հավաստումները, այդ թվում առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը, ներառյալ ապրանքատեսակների արտադրող կազմակերպության կողմից ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիր, իսկ 28.07.2015թ. Ընկերությունը ստացել է էլեկտրոնային ծանուցում այն մասին, որ սահմանված ժամկետում «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ՊԱԳ-ի հավաստագիրը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է այն ներկայացնել, իսկ սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում հայտը կմերժվի: «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին տեղեկացվել է նաև, որ Ընկերության կողմից ներկայացվել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Պահանջվել է ներկայացնել գնային առաջարկի փաստաթղթային հիմնավորումներ:

31.07.2015թ. գնահատող հանձնաժողովը, մասնակցությամբ՝ Կ. Մկրտչյանի , Ա, Հովակիմյանի, Հ. Սարգսյանի, որոշում է կայացրել, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետով, մերժել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը և միաժամանակ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել «Լիկվոր» ՓԲԸ-ին:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերը և դրանից հետո կայացված մերժման որոշումն իրականացվել են ոլորտը կարգավորող գործող օրենսդրության կոպիտ և ակնհայտ խախտումներով, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերում գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման է սահմանվել այդ ապրանքների արտադրող կազմակերպության կողմից ՊԱԳ-ի /GMP/ համապատասխանության հավաստագիրը, ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը համարել է չհիմնավորված ցածր:

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն նշել է նաև, որ՝

- Օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներն են, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:
- Նույն օրենքի 3-րդ հոդվածի՝
  - 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:
  - 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում,

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

- 4-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ընկերությունը բողոքում նշել է նաև, որ ՊԱԳ հավաստագիրը վերաբերում է ապրանք արտադրող ընկերությանը, սակայն որևէ կերպ այն չի կարող հանդիսանալ գնման առարկայի որպես հատկանիշ կամ գնման առարկայի տեխնիկական բնութագրով ապրանքի հատկանիշ:

Ընկերության ներկայացրած դեղերի առաջարկը վերաբերում է այն դեղերին և ապրանքներին, որոնք անցել են ՀՀ-ում պահանջվող անհրաժեշտ փորձաքննությունները և ստացել են համապատասխան գրանցում, այսինքն ապրանքին վերաբերող բոլոր պահանջները բավարարում են ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: Բացի այդ, գնահատող հանձնաժողովը զրկված չէր հնարավորությունից առաջարկվող ապրանքի որակի համապատասխանությունը գնման պահանջարկվողին ստուգելու համար երկու ընկերությունների կողմից առաջարկված ապրանքն ուղարկել մասնագիտական փորձաքննության և դրա որակի վերաբերյալ ստանալ եզրակացություն: «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն հրավերով ներկայացված գնային առաջարկով ներկայացրել էր «Ֆարմատեք» ՓԲԸ-ից ձեռք բերվող ապրանքների գնային առաջարկ: Ներկայումս հրավերով ներայացված չափաբաժիններով պահանջվող ապրանքները ՀՀ-ում

արտադրվում են և՛ «Ֆարմատեք» ՓԲԸ-ի, և՛ «Լիկվոր» ՓԲԸ-ի կողմից, սակայն դրանցից որպես արտադրող ընկերություն ՊԱԳ-ի հավաստագիր ունի միայն «Լիկվոր» ՓԲԸ-ն:

Այսպիսով, ըստ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի, գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման սահմանելով արտադրողի ՊԱԳ-ի հավաստագրի առկայությունը, որը ՀՀ-ում դեղ արտադրելու համար պարտադիր պահանջ չի հանդիսանում, հանձնաժողովը ակնհայտորեն կանխակալ խտրական վերաբերմունք է ցուցաբերել և խախտել է մրցակցության և հավասարության սկզբունքը և, ինքնաբերաբար ապրանքին չվերաբերող պարտադիր պայման սահմանելով, առավելություն է տվել մեկ ընկերության արտադրանքին:

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն բողոքում նշել է, որ Ընկերության գնային առաջարկը համարելով չհիմնավորված ցածր, չի պարզաբանվել, թե փաստացի ինչ հիմքով է համարվում չհիմնավորված ցածր այն դեպքում, երբ Ընկերությունը ներկայացրել և պատրաստ է ներկայացնել գնային առաջարկով ներկայացված ապրանքի ձեռքբերման հիմքերը:

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն գտնում է, որ վերոնշյալ խախտումները հանգեցնում են պետական միջոցների անարդյունավետ և անտնտեսվար օգտագործմանը և վատնմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն խնդրել է ճանաչել ապօրինի և դադարեցնել 31.07.2015թ. և 03.08.2015 «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնահատող հանձնաժողովի որոշումները, կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ չեղյալ հայտարարելով 10.08.2015թ. «Լիկվոր» ՓԲԸ-ի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված «ՇՀԱՊՁԲ-15/4-4-1 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման պայմանագիրը:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 01.09.2015թ. թիվ 09/2168 գրությամբ ներկայացրել է «ՇՀԱՊՁԲ-15/4-

4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 14.07.2015թ. ներերակային օգտագործման համար հեղուկների ձեռք բերման նպատակով հայտարարվել է «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների կարիքների համար 2011-2015թթ. ընկած ժամանակահատվածում ներերակային օգտագործման համար հեղուկների մատակարար է հանդիսացել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն, որը ներկայացնում է «Ֆարմատեք» ՓԲԸ-ի դեղագործական ընկերության արտադրանքը:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ 2015 թվականից վերջինիս դեղատան կողմից արձանագրվել են բազմաթիվ խախտումներ՝ կապված «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվող հեղուկների որակի անհամապատասխանության հետ (հեղուկների փաթեթներում մազերի և բորբոսի առկայություն): Նման որակին չհամապատասխանող հեղուկների օգտագործումը կարող է հանգեցնել հիվանդների կյանքի համար վտանգավոր բարդությունների առաջացմանը: Չնայած նրան, որ կազմակերպության կողմից դժվարությամբ իրականացվում էր անորակ հեղուկների փոխարինումը, մատակարարվող հեղուկների որակի անհամապատասխանությունը սկսել է կրել շարունակական բնույթ, ինչի արդյունքում Պատվիրատուն գրավոր դիմել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին՝ խնդրելով դադարեցնել անորակ հեղուկների մատակարարումը, ներկայացնել դիրքորոշում և տալ որոշակի երաշխիքներ հետագայում մատակարարվող հեղուկների որակի համապատասխանության վերաբերյալ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը հայտնել է, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից 04.05.2015թ. ներկայացված պատասխան գրությամբ նշվել է՝ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն մատակարարման ընթացքում մանրամասն կստուգի մատակարարվող դեղորայքը՝ թերություններից խուսափելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերի միջև ձեռքբերած գրավոր

պայմանավորվածությունից անմիջապես հետո «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից անորակ հեղուկների մատակարարումը շարունակվել է, Պատվիրատուի դեղորայքի գծով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է ներերակային օգտագործման հեղուկների նոր գնման հայտ: Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում պահանջվող հեղուկների որակը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով պարտադիր պայման է հանդիսանում ՊԱԳ (պատշաճ արտադրության գործունեություն) GMP ստանդարտներին համապատասխանելիությունը, (Արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայությունը):

Պատվիրատուն հայտնել է նաև, որ Ընթացակարգի շրջանակներում սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2015թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի որոշմամբ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու հետևանքով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ընթացակարգի քարտուղարի կողմից մասնակցից համապատասխան ծանուցմամբ պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են բոլոր փաստաթղթերը՝ բացառությամբ պատշաճ արտադրության գործունեության համապատասխանության հավաստագրի:

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետի՝ մասնակցին էլեկտրոնային ծանուցմամբ տրամադրվել է մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու նպատակով, որի արդյունքում մասնակցի կողմից ներկայացվել է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանի գրությունը այն մասին, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ներկայում չունի ՊԱԳ-ի համապատասխանելիության սերտիֆիկատ, ինչպես նաև «Ֆարմատեք» ՓԲԸ-ին տրամադրված ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիր, որի գործողության ժամկետը սահմանված է մինչև 2007թ. նոյեմբեր ամիսը: Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ մասը՝ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.9 կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի դեպքում անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր: Գնահատող հանձնաժողովի 03.08.2015թ. արձանագրություն թիվ 4-ի 2-րդ կետի որոշմամբ՝ «Լիկվոր» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և անգործության ժամկետ է սահմանվել 04.08.2015թ. մինչև 08.08.2015թ. ներառյալ: Որոշումը էլեկտրոնային եղանակով ծանուցվել է մասնակիցներին 03.08.2015թ.: Պարզ երևում է, որ Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրն է հանդիսանում 10.08.2015թ. և պայմանագիրը չի կնքվել սահմանված անգործության ժամկետում:

Ինչ վերաբերում է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից բողոքում ներկայացված գնային տարբերություններին, ապա, ըստ Պատվիրատուի, դրանք արդարացված են, քանի որ GMP ստանդարտներին համապատասխանելիությունը կտրուկ բարձրացնում է արտադրվող դեղորայքի ինքնարժեքը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը հայտնել է, որ չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորումները Ընկերությունից պահանջվել են՝ համաձայն Կարգի 47-րդ կետի 3-րդ մասի: Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող հիմնավորումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, և հանձնաժողովը այդ մասով «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի նկատմամբ չունի ոչ մի առարկություն:

«ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման է սահմանվել ՊԱԳ (պատշաճ արտադրության

գործունեություն) GMP ստանդարտներին համապատասխանելիությունը, (Արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայությունը):

Պատվիրատուն նշել է, որ ՀՀ տարածքում, որպես արտադրող ընկերություն ՊԱԳ-ի հավաստագիր ունի միայն «Լիկվոր» ՓԲԸ-ն, սակայն դա չի նշանակում, որ «Լիկվոր» ՓԲԸ-ի արտադրանքը չի կարող մատակարարվել թե «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի և թե այլ դեղորայքի մատակարար հանդիսացող կազմակերպությունների կողմից: Արտադրող կազմակերպությանը պատկանող ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիրը տրամադրվում է արտադրող կազմակերպությանը ներկայացնող կազմակերպություններին, որոնց թիվը կարող է լինել մեկից ավել: Բացի այդ, ՀՀ-ն գնումների դաշտը չի սահմանափակվում ՀՀ տարածքում արտադրված դեղորայքով, ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված մասնակիցների մասնակցությամբ: Մասնակից կարող են լինել ՀՀ տարածքից դուրս գրանցված կազմակերպություններ: Այդպես, օրինակ Ռուսաստանի Դաշնության տարածքում գրանցված բազմաթիվ դեղագործական ընկերություններ ունեն ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիր, ինչը նշանակում է, որ մասնակցի դիրքորոշումը Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի խախտման վերաբերյալ անհիմն է:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ընթացակարգի հրավերում խախտում հայտնաբերելու դեպքում Ընկերությունը իրավունք ուներ, համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի, Պատվիրատուից պահանջել պարզաբանում, ինչը Ընկերության կողմից չի իրականացվել: Փոխարենը «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն, չունենալով հրավերով պարտադիր պայման հանդիսացող ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիր ներկայացնելու հնարավորություն, մասնակցելով Ընթացակարգին՝ ներկայացրած տեխնիկական բնութագրում տրամադրել է կեղծ տեղեկատվություն ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայության վերաբերյալ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը տեղեկացրել է, որ 10.08.2015թ. «Լիկվոր» ՓԲԸ-ի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ) պայմանագրի շրջանակներում 12.08.2015թ. դրությամբ արդեն իսկ մատակարարվել է գնման առարկա հանդիսացող հեղուկների որոշ քանակություն:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը գտնում է, որ «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներին, իսկ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքված է սահմանված անգործության ժամկետից հետո Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը մերժել:

3. ԳԲԽ-33/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 11.09.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի 26.08.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-33/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-33/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 14.07.2015թ. դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՓԲԸ-ն:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամն Ընթացակարգի Հրավերի N 1 հավելվածով գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման է հանդիսացել ՊԱԳ (պատշաճ արտադրության գործունեություն) GMP ստանդարտներին համապատասխանության

առկայությունը (Արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայությունը):

3. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով նշել է Ընթացակարգի Հրավերի N 1 հավելվածով գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման հանդիսացած ՊԱԳ (պատշաճ արտադրության գործունեություն) GMP ստանդարտներին համապատասխանության առկայություն (Արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայությունը):

3. Ընթացակարգի քարտուղար՝ Մ. Կարապետյանը, europharmarmenia@yahoo.com էլեկտրոնային փոստին ուղղված ծանուցումամբ հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 23.07.2015թ. գնահատող հանձնաժողովի նիստի որոշմամբ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող և միևնույն ժամանակ խնդրել է մինչև 29.07.2015թ. ներառյալ ներկայացնել հրավերով սահմանված հավաստումները, այդ թվում առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը՝ ներառյալ ապրանքատեսակների արտադրող կազմակերպության կողմից ՊԱԳ-ի (GMP) համապատասխանության հավաստագիր:

4. Ընթացակարգի քարտուղար՝ Մ. Կարապետյանը, 28.07.2015թ. europharmarmenia@yahoo.com էլեկտրոնային փոստին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ սահմանված ժամկետում «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ապրանքատեսակների արտադրող կազմակերպության կողմից տրամադրված ՊԱԳ-ի (GMP) համապատասխանության հավաստագիրը, ինչը պահանջվել է հրավերով: Ծանուցմամբ քարտուղարը «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին հայտնել է, որ մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող վերը նշված փաստաթղթերը, իսկ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը կմերժվի (հիմք՝ Կարգի 51-րդ և 52-րդ կետի 2-րդ ենթակետ):

Միևնույն ժամանակ ծանուցմամբ նշվել է, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ և 16-րդ չափաբաժինների համար հայտով ներկայացվել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ և քարտուղարը խնդրել է երեք աշխատանքային

օրվա ընթացքում վերը նշված չափաբաժինների համար ներկայացնել չհիմնավորված ցածր գնային առաջարկի փաստաթղթային հիմնավորումներ (Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետ), իսկ սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացնելու կամ ներկայացված հիմնավորումները հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում Ընկերության հայտը կմերժվի:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետով, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը և մինչև նույն թվականի օգոստոսի 5-ը ժամը 10:00-ն փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով «Լիկվոր» ՓԲԸ-ին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2015թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 1-ին կետի համաձայն՝ «Լիկվոր» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է բոլոր պահանջված փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:
- 2-րդ կետի համաձայն՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով «Լիկվոր» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և 04.08.2015թ.-08.08.2015թ. (ներառյալ) սահմանել անգործության ժամկետ:

7. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լիկվոր» ՍՊԸ-ի միջև 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով 10.08.2015թ. կնքվել է պայմանագիր:

8. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2015թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է

բողոք, որը չի համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, մասնավորապես, բողոքում նշված չի եղել պատվիրատուի անվանումը, հասցեն և գնման ընթացակարգի առարկան: Կենտրոնը Խորհրդի անունից այդ մասին տեղեկացրել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին՝ տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

9. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից նույն ընթացակարգի վերաբերյալ 18.08.2015թ. կրկին ներկայացվել է բողոք հետևյալ պահանջով՝ անվավեր ճանաչել 31.07.2015թ. «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը:

10. 18.08.2015թ. բողոքի կապակցությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ին հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված հայտարարության համաձայն՝ 3-8-րդ, 10-11-րդ, 13-14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լիկվոր» ՍՊԸ-ի միջև 10.08.2015թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-15/4-4-1 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման պայմանագիր:

11. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն 26.08.2015թ. նույն ընթացակարգի վերաբերյալ կրկին ներկայացրել է բողոք, որն ընդունվել է քննության, քանի որ համապատասխանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչի կապակցությամբ ներկայացվել է ԳԲԽ-33/15 եզրակացությունը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով,

մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքների վրա:

Օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:
- 4-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Խորհուրդը գտնում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից պահպանվել են Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի պահանջները, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ և 16-րդ չափաբաժիններով գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրել են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Խորհուրդը արձանագրում է, որ գնման առարկայի հատկանիշները ներկայացվել են բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Խորհուրդը գտնում է նաև, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից չեն խախտվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-

րդ մասի 1-ին կետի և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջները, «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը իրականացվել է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի համապատասխան, և «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի համար անհավասար պայմաններ չեն ստեղծվել Պատվիրատուի կողմից կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու համար: Խորհուրդը արձանագրում է նաև, որ գնման առարկայի բնութագրերը ապահովել են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, չեն հանգեցրել գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, եղել են օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը:

Այսպես, 2008թ. փետրվարի 14-ի «Եվրոպական միությունում դեղերի ոլորտը կարգավորող կանոններ: Պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ)» ԵՄ ուղեցույցի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձը պետք է ապահովի, որ արտադրված դեղը համապատասխանի նախատեսված օգտագործման նպատակներին, բավարարի գրանցման հավաստագրի պահանջներին և վտանգի չենթարկի սպառողներին իր անբավարար որակի, արդյունավետության և անվտանգության պատճառով: Պահանջվող որակը հուսալիորեն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ և արդյունավետորեն կիրառել որակի ապահովման ամբողջական համակարգ, որը կներառի «պատշաճ արտադրական գործունեությունը», «որակի հսկումը» և «որակի ռիսկերի կառավարումը»: Պատշաճ արտադրական գործունեությունը մտնում է որակի ապահովման համակարգի մեջ և երաշխավորում է, որ արտադրությունը և որակի հսկումը հետևողականորեն իրականացվեն տվյալ արտադրանքի նկատմամբ կիրառելի որակի ստանդարտների համաձայն և գրանցման հավաստագրով կամ արտադրանքի սպեցիֆիկացիաներով սահմանված կարգով:

2010թ. նոյեմբերի 25-ին N 1603-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) կանոնները՝ որպես դեղերի որակի ապահովման համակարգի կարևորագույն

բաղադրիչներ, որոնցով երաշխավորվում է, որ դեղը մշտապես արտադրվում ու հսկվում է որակի հաստատված չափորոշիչների համաձայն:

Այսպիսով, ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիրը (GMP ստանդարտներին համապատասխանելիությունը) երաշխավորում է դեղորայքի անվտանգությունը և որակը:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից սահմանված ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի պահանջը եղել է օբյեկտիվորեն հիմնավորված, քանի որ այն երաշխավորում է դեղորայքի անվտանգությունը և որակը:

Պետք է նշել, որ ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիրը (GMP ստանդարտներին համապատասխանելիությունը) տրվում է թե ՀՀ տարածքում և թե ՀՀ տարածքից դուրս գտնվող դեղորայք արտադրող կազմակերպություններին և այդ հավաստագիրը տրամադրվում է ցանկացած մատակարար կազմակերպությանը, ով ներկայացնում է ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիր ունեցող արտադրող կազմակերպությանը: Ավելին, Հրավերի տեխնիկական բնութագրով ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիրը, որպես պարտադիր պահանջ, սահմանվել է գնման առարկայի (դեղորայքի) համար:

Ուստի, ըստ Խորհրդի, Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված չէր հնարավորությունից մատակարարել թե ՀՀ տարածքում, և թե ՀՀ տարածքից դուրս GMP ստանդարտներին համապատասխան արտադրված դեղորայք, քանի որ ինչպես նշվել է, ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագիր ունեցող արտադրողը այդ հավաստագիրը տրամադրում է իր արտադրանքը մատակարարող կազմակերպությանը:

Տվյալ դեպքում, «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է «Ֆարմատեք» ՓԲԸ-ի արտադրանքը, իսկ ըստ «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.2015թ. թիվ 0101139315 գրության՝ «Ֆարմատեք» ՓԲԸ-ի ՊԱԳ համապատասխանության հավաստագիր ստանալու աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Բացի այդ, «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է «Ֆարմատեք» ՓԲԸ-ի ՊԱԳ-ի հավաստագիր, որի գործողության ժամկետը սահմանված է եղել մինչև 2007թ. նոյեմբեր

ամիսը, ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ մասով սահմանված պահանջները մերժել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը:

Ուստի այս մասով «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի համար անհավասար պայմաններ չեն ստեղծվել Պատվիրատուի կողմից կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու համար:

2. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 1-ին մասի՝

- 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Տվյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը և արձանագրել է, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն չի ներկայացրել «ՇՀԱՊՁԲ-15/4-4(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարտադիր պայման հանդիսացած ՊԱԳ (պատշաճ արտադրության գործունեություն) GMP ստանդարտներին համապատասխանության հավաստագիրը (Արտադրողի ՊԱԳ-ի համապատասխանության հավաստագրի առկայությունը):

Արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նկատի ունենալով, որ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն, ղեկավարվելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետով, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը:

Կենտրոնում 01.09.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորումները Ընկերությունից պահանջվել են համաձայն՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 3-րդ

մասի: Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող հիմնավորումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, և հանձնաժողովը այդ մասով «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի նկատմամբ չունի ոչ մի առարկություն: Պատվիրատուի ներկայացուցիչը նշել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընկերության կողմից չի ներկայացվել ՊԱԳ-ի (GMP) համապատասխանության հավաստագիր:

Ասյ կապակցությամբ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պահպանվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները և այս հիմքով ևս «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

3. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսունապատիկը չգերազանցող գնումների դեպքում առնվազն 5 օրացուցային օր է:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը նույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Այսպիսով, Խորհուրդը իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը Օրենքի 9-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքում, եթե միաժամանակ առկա են երեք պարտադիր պայմաններ՝

ա. եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից,

բ. եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ,

գ. եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Տվյալ դեպքում՝

ա. «ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն չի զրկվել իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, այն է՝ 10.08.2015թ. և 18.08.2015թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ վերաբերյալ ներկայացրել է բողոք, որը չի բավարարել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և այդ հիմքով չի ընդունվել վարույթ: 26.08.2015թ. ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ն կրկին ներկայացրել է բողոք, որն ընդունվել է քննության և որի վերաբերյալ ներկայացվել է ԳԲԽ-33/15 եզրակացությունը:

բ. Ընկերության կողմից նշված Օրենքի 9-րդ հոդվածի խախտումը, ըստ Խորհրդի, համադրված չէ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/4-4 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ:

գ. Քանի որ առկա չէ «բ» կետում նշված այլ խախտում, ուստի նման խախտման բացակայության պայմաններում չի կարող լինել որևէ ազդեցություն Պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ առկա չեն Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պայմանագիրը չեղյալ հայտարարելու անհրաժեշտ և պարտադիր պայմանները:

Ինչ վերաբերում է Ընկերության բողոքով ներկայացրած առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու մասին պահանջին, ապա ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը նման լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԵՎՐՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի 26.08.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամ՝ **Լեոնիկ Խաչատրյան**